ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 05-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի՝ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Տաթև համայնքի(այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ- 0, ձեռնպահ-0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

1.Համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 19-ի թիվ 34-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N63-Ա որոշման 1-ին կետով հաստատված N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունները հաստատելու նպատակով:

3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում՝ լիազորված պետական կառավարման մարմնի կողմից դրանք հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի
Տաթև համայնքի ավագանու
2021 թ. դեկտեմբերի 16-ի N 63-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 41:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1.	Համայնքի ղեկավար	1	425000		425000
2.	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	346000		346000
3.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	326000		326000
4.	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	260000		260000
5.	Համայնքի ղեկավարի օգնական	1	220000		220000
	Ընդամենը	5			1577000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
6.	Վարչական ղեկավար Տաթև բնակավայրում	1	185000		185000
7.	Վարչական ղեկավար Խոտ բնակավայրում	1	185000		185000
8.	Վարչական ղեկավար Հարժիս բնակավայրում	1	185000		185000
9"	Վարչական ղեկավար Հալիձոր բնակավայրում	1	185000		185000
10"	Վարչական ղեկավար Սվարանց բնակավայրում	1	150000		150000
11.	Վարչական ղեկավար Տանձատափ բնակավայրում	1	150000		150000
	Ընդամենը	6			1040000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
12.	Աշխատակազմի քարտուղար	1	336000		336000
13.	Գլխավոր մասնագետ	1	235000	23500	258500

14.	Գլխավոր մասնագետ	1	235000		235000
15.	Գլխավոր մասնագետ	1	235000		235000
16.	Առաջատար մասնագետ	1	165000	16500	181500
17.	Առաջատար մասնագետ	1	165000		165000
18.	Առաջատար մասնագետ	1	165000		165000
19.	Առաջատար մասնագետ	1	165000		165000
20.	Առաջատար մասնագետ	1	165000		165000
21.	Առաջատար մասնագետ	1	165000		165000
22.	Առաջին կարգի մասնագետ	1	140000	14000	154000
23.	Առաջին կարգի մասնագետ	1	140000		140000
24.	Առաջին կարգի մասնագետ	1	140000		140000
25.	Առաջին կարգի մասնագետ	1	140000	14000	154000
26.	Երկրորդ կարգի մասնագետ	1	125000		125000
27.	Երկրորդ կարգի մասնագետ	1	125000		125000
	Ընդամենը	14		68000	2909000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
28.	Տնտեսվար	1	185000		185000
29.	Վարորդ	1	140000		140000
30.	Հավաքարար(Տաթևի համայնքապետարանում)	1	120000		120000
31.	Ակումբավար(Խոտ բնակավայրում)	1	105000		105000
32.	Ակումբավար-գրադարանավար(Քաշունի բնակավայրում)	1	100000		100000
33.	Ակումբավար-գրադարանավար(Տանձատափ բնակավայրում)	0.5	168000		84000
34.	Ակումբավար(Տաթև բնակավայրում)	0.5	130000		65000
35.	Ակումբավար(Հարժիս բնակավայրում)	0.5	130000		65000
36.	Ակումբավար(Հալիձոր բնակավայրում)	0.5	130000		65000
37.	Ակումբավար(Սվարանց բնակավայրում)	0.5	130000		65000
38.	Հավաքարար(Հալիձոր բնակավայրում)	0.5	186000		93000
39.	Հավաքարար(Տաթև բնակավայրում)	0.5	120000		60000
40.	Հավաքարար(Խոտ բնակավայրում)	0.5	120000		60000
41.	Հավաքարար(Հարժիս բնակավայրում)	0.5	120000		60000
	Ընդամենը	11.5			1267000
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ	36.5			6793000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տաթևի համայնքապետարանի աշխատակազմը ձևավորվել է 2016 թվականի ապրիլի 1-ին: Համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը հաստատվել են ըստ նախնական տեսակետներով ձևավորված գործառույթների հիման վրա: 2018 թվականին մեկ անգամ ևս փոփոխություններ են իրականացվել համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկում՝ հաստատվել են նոր պաշտոնների անձնագրեր: 2018 թվականի փոփոխություններով պաշտոնի անձնագրերից 2/երկուս/-ը վերաբերվում են համայնքապետարանի ֆինանսական գործառույթների իրականացմանը: Սակայն նշված 2/երկու/ պաշտոնի անձնագրերում էլ <<Գիտելիքներ և հմտություններ>> բաժնում պահանջը դրված է կրտսեր պաշտոններ զբաղեցնելու աշխատանքային փորձի և ստաժի համապատասխան չափորոշիչներով՝ <<Համայնքային ծառայության մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի <<գ>> ենթակետ>>: Քանի որ ավելի նպատակահարմար է, որպեսզի համայնքապետարանի ֆինանսական գործառույթները(բյուջետավարում, ՀԾ ծրագրի գործարկում և այլն) իրականացնող մասնագետներից առնվազն մեկը լինի <<Գլխավոր մասնագետ>>, ուստի անհրաժեշտություն է առաջանում վերանայել նախկինում եղած համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկը, և ավելացնել մեկ <<Գլխավոր մասնագետ>>-ի հաստիք նոր ստեղծվելիք պաշտոնի անձնագրում <<Գիտելիքներ և հմտություններ>> բաժնում պահանջը դնել գլխավոր պաշտոններ զբաղեցնելու աշխատանքային փորձի և ստաժի համապատասխան չափորոշիչներով՝ <<Համայնքային ծառայության մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> ենթակետ>>:

Նույն 2018 թվականի փափոխություններով՝ համայնքապետարանի առաջատար մասնագետների պաշտոնի անձնագրերից 1/մեկը/ վերաբերվում է քաղաքաշինության, սանիտարական մաքրման, աղբահանության, բարեկարգման և կանաչապատման գործառույթների իրականացմանը, սակայն քանի որ Տաթև համայնքը համարվում է զբոսաշրջության գոտի և համայնքում կազմվող քաղաքաշինական գործերը ենթակա են հատուկ համաձայնեցման, ինչպես նաև ըստ անցած մի քանի տարիների փորձի՝ Տաթև համայնքում ավելացել և ավելանում է քաղաքաշինությանը վերաբերվող գործառույթները(նոր շինարարություններ, ինքնակամ կառույցներ և այլն) և դրանց քաղաքաշինական փաթեթների կազմումը և փաստաթղթաշրջանառության ապահովումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ, և քանի որ համայնքը չունի գլխավոր ճարտարապետի հաստիք, ուստի անհրաժեշտություն է առաջանում ստեղծել 1/մեկ/ գլխավոր մասնագետի հաստիք, որի պաշտոնի անձնագրի չափորոշիչները կլինեն սահմանված <<Համայնքային ծառայության մասին

օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> ենթակետ>>-ով և պաշտոնի անձնագրով սահմանված կլինի քաղաքաշինությանը վերաբերվող ամբողջ գործառույթները: Իսկ նշված առաջատար մասնագետի պաշտոնի անձնագրում կատարել համապատասխան փափոխություն՝ քաղաքաշինությանը վերաբերվող գործառույթները հանել:

2018 թվականին հաստատված հաստիքացուցակի «Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի» բաժնում առկա են երկու համակարգչային օպերատորների հաստիքներ, որոնք, ըստ՝ «ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից» հաստատված ուղեցույցի անհրաժեշտ է փոխարինել համայնքային ծառայողների հաստիքներով, ըստ որի նախատեսվում է ստեղծել երկու երկրորդ կարգի մասնագետի հաստիքներ

Ստորև ներկայացվում է համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկի փոփոխությունների և նոր ձևավորված հաստիքացուցակում ներառված փոփոխության ենթարկված հաստիքների մասին համառոտ տեղեկատվություններ ըստ առանձին հաստիքների.

Նախկին հաստիքացուցակում եղած վեց առաջատար մասնագետներից մեկի պաշտոնի անձնագրում կատարվում է համապատասխան փոփոխություններ՝ հանվում է քաղաքաշինությանը վերավերվող գործառույթները: Նոր ստեղծված գլխավոր մասնագետի հաստիքներից մեկը կզբաղեցնի ֆինանսական գործառույթներ իրականացնող մասնագետ: Ֆինանսական գործառույթներ իրականացնող մասնագետի համար կստեղծվի նոր պաշտոնի անձնագիր, ըստ որի՝ գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագրի պարտականություններ բաժնում կավելացվեն ֆինանսական գոռծառույթներին վորաբերվող ավելի պատասխանատու կետեր/համայնքապետարանի ողջ ֆինանսական գործողությունների պատասխանատվություն, բյուջետավարման գործընթացի ճիշտ կազմակերպում, համայնքային ենթակայության հիմնարկներին ուղղված միջոցների մոնիթորինգ ու վերահսկում, ՀԾ ծրագրի գործարկում և այլն/: Մյուս գլխավոր մասնագետի հաստիքը կզբաղեցնի քաղաքաշինական գործառույթներ իրականացնող համապատասխան մասնագետ: Քաղաքաշինական գործառույթներ իրականացնող մասնագետի համար կստեղծվի նոր պաշտոնի անձնագիր, ըստ որի՝ գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագրի պարտականություններ բաժնում կավելացվեն քաղաքաշինական գոռծառույթներին վորաբերվող ավելի պատասխանատու կետեր/ հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողերի օգտագործման սխեմաների, գլխավոր հատակագծերի իրականացման, քաղաքաշինական նպատակով տրամադրված հողերի պայմանագրերի և օտարված հողերի պահանջների կատարման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման, հողերի օտարման կամ օգտագործման տրամադրման, ինքնակամ

շինությունների օրինականացման, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, քաղաքաշինական բնույթի տեխնիկական եզրակացությունների կազմման, հատակագծեր կազմման, գծագրերի մշակման և այլն/: Երկրորդ կարգի մասնագետներից մեկի համար կստեղծվի նոր պաշտոնի անձնագիր, ըստ որի՝ իրավունքներ և պարտականություններ բաժնում կգետեղվի հաշվապահական փաստաթղթաշրջանառության գործավարությանը վերաբերվող գործառույթներ: Երկրորդ կարգի մյուս մասնագետի համար կստեղծվի նոր պաշտոնի անձնագիր, ըստ որի՝ իրավունքներ և պարտականություններ բաժնում կգետեղվի քարտուղարության փաստաթղթաշրջանառության գործավարությանը վերաբերվող գործառույթներ: Արդյունքում նախկին հաստիքացուցակի և նոր հաստիքացուցակի աշխատավարձի ֆոնդը ամսվա կտրվածքով կավելանա 53000/հիսուներեք հազար/ ՀՀ դրամով:

Տաթև համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Մարատ Գերասիմյան